

բանաստեղծի նշանաւոր դարձած տողերը.

«Կապուտ երկնքում աստղեր են
փալկում,
կարկուտ ու կափակ գլխիս են
թափւում»:

Լեւոնաստեղծ ալլանդակ բառեր ու նախադասութիւններ որքան կամենաք.— մոլեգնալին վշտեր, անշուք սիրտ, չար ճակատագրի անողոք բաղտ, որոտ հրաման և ալն և ալն. Յանգերի ու վանկերի մեծ անհամաձայնութեան մասին էլ չենք խօսում:

Պր. Մոճոռեանը նմանութիւններ չատ ունի. (Վտակ, Ամոլ, Տէք ինձ մի քաղցր քուս, Եթէ սիրտս ոչ մի տեղում, և ալն): Այս անվիշատակ

նմանութիւններն էլ արեւմտեան և՛ լատիշ, որ ինձ փնջնում են մի ուրիշ բան.— Մեր գիւղացի քարտաշին տեւ էին ձիու պատկեր, որ նմանը փորագրի մի քաջ մարդու գերեզմանի վերապ. ուստէն փորագրել էր և ձիու տեղ դուրս էր եկել էջ:

Այստեղ արդէն ժամանակ է բարի խորհուրդ տալու պ. Մոճոռեանին, թողնել բանաստեղծութիւնը և իւր գործը ճանաչել. թէ չէ, ոչ թէ հողեղէնների անլալտ մեղքերի, ալլապիսի բաների համար միայն Ուլիսսի սուրբ գագաթից կը զարանալ հալը Արամազդը, և գուցէ Տարտարոս էլ ուղարկի:

Յովհաննէս Թումանյան:

«ՋԱԼԱՍՔԻ ԲՈՒՐՄՈՒՆՔ»-Ի ԱՌԻԹՈՎ:

(Պատասխան «Ջալասքի բուրմունք»-ի մասին «Մուրճ»-ի № № 7—8 տպած զրախօսութեան):

Հասկանալով ազգագրական նիւթերի անհրաժեշտութիւնը ասպազալ գիտնական ուսումնասիրութեան համար, ես ամբողջ մի տարի շրջել եմ Ախալքալաքի ամբողջ գաւառը և Պ. Խալաթեանի կազմած «Մրագիր Հալ ազգագրութեան» առաջնորդութեամբ աշխարհի տեսած և ակնշնչուլ տած բաները միայն նկարագրել, գրի եմ առել, և ասպա դոցանից կազմել մի աշխատութիւն, որ կրում է «Ջալասք» խորագիրը և որ 1600 երեսների մէջ պարունակում է հետեւեալը.

Ա. հարբ. Ջալասքի անցեալը հայոց և վրաց մատենագիրներից քաղւած. Ջալասք և Ախալքալաք.— Խրթըզ, Տիմուկ կամ Թմուկ, Մուշա, Գիւմուրդո, Վարձիա կամ Վարձուհիք:

Ջալասքի տեղագրութիւնը, սահմանները, Ախալքալաքի դաշտավայրը, լեռները, լճերը և գետերը, կլիման, բուսականութիւնը, հանքալին ջրերը:

Քաղաքական մասն. Ախալքալաք գիւղերի հեռաւորութիւնը քաղաքից, նշանաւոր գետերը, Կարծախ, Բարալէթ, Արագովա, Սաթխա, Գաբըլովա և Կալմիկովների (դուխորներին հոգեւոր սեւտ) բնակարանը, Սուլդա, Սաղամօ:

Հնութիւններ. — Մոնղալի եկեղեցին, Գիւմուրդու եկեղեցին, Հեթում Ա. թագաւորի հաւաքած սուրբ նշխարների տալիք, Թմոկի կամ Տիւմուկ, Վարչիա, Մանիցգում: Մուրճ, Քուռզլու բերդը, Սամսարներ և սոցա ալեւրում դանւած վալրենին:

Բնակիչները. — Բացարձակ թիւ, տների թիւը, բնակիչների թիւը ըստ սեռի, արական սեռի բնակիչների թիւը ըստ հասակի, ըստ ազգութեան, ըստ դասակարգի, ըստ դաւանութեան, Ընդհանուր ցուցակ բնակիչների:

Մենդարբութիւն. — ծննդների թիւը՝ ըստ ազգութեան, ըստ մարդ հասակի, ըստ սեռի: Օրինածին և ապօրինի ծնունդների Սոցա դասաւորութիւնը ըստ ամիսների:

Ննջեցեալներ. — թիւը 5 տարւակ ընթացքում, սոցա թիւը ըստ սեռի, ըստ հասակի, ամիսների համեմատ դասաւորւած: Ննջեցեալների թիւը քաղաքացիների և գիւղացիների մէջ:

Կարնոլ գաղթը, Կարնոլ գաւառ, Էրզրում և նորա գիւղերը, բնակիչները: Տնտեսական դրութիւնը՝ ա) քաղաքակիւնների, բ) գիւղացիների, Կառավարութիւն՝ ա) նահանգի, բ) գիւղերի, Գալի և Հալթա: Կարապետ արքեպիսկոպոս. — մանկութիւնը, Կարապետ կուսակրօն, սոյլ ազգային գանձանակ, Կարապետեան ուսումնարան, ժանտախտ, ռուս-տաճկական պատերազմ, հալերի վրէժնդրութիւնը տաճիկներից, հաշտութիւն և հալերի գաղթը:

Հալախօս հալ-կաթոլիկներ:

Թրքախօս հալ-կաթոլիկներ:

Խոնուսի և Մշի գաղթականներ (Գիլիֆ, Էլդիա և ալն):

Հալ-բոշաներ, աւանդութիւններ սոցա ծագման մասին, տնտեսական դրութիւնը:

Գուխորորներ:

Բնակարանը և իւր պարագաները:

Հանդերձանք:

Ջաւախքի բնական և արդիւնաբերական ուժերը և բնակիչների տնտեսական գործունէութիւնը: Գիւղացիների հողի մշակութիւնը: ա. Սրկ-րադործութիւն, հողի քանակութիւնը, մի հոգուն, մի գերդաստան բաշխւած հողի քանակութիւնը, արդիւնաբերած հացահատիկները և նոցա քանակութիւնը: բ. Ալգեպանութիւն. — Ալգիների թիւը, բռնած տարածութիւնը, արդիւնաբերութիւնը: գ. Մխախոսի մշակութիւնը և արդիւնաբերութիւնը: դ. Պարտիզպանութիւն, Հացի հասարակաց շտեմարաններ:

դ. Հիւանդութիւն և բժշկութիւն.—Հիւանդութեան ոգիներ, բժշկա-
րաններ, ժողովրդական դեղեր:

է. Մահ, թաղումն և մեռելոց:

ը. Հոգու և հանդերձեալ կեանքի մասին:

Գ. Կոթոր, Հաւատք:

ա. Աստածութիւն, սրբեր, պաշտօն և սպաս կեկեցեցական, կրօնա-
կան դրածքներ:

բ. Հրեշտակներ և ոգիներ բարի և չար, սատանալ, պահապան հրեշ-
տակ, բարի և չար հրեշտակներ, տան պահապան հրեշտակ, թիկնորի ոգի,
փերի ոգի, (ժողովրդական բարբառով պատումներ սոցա մասին):

գ. Աշխարհածնութիւն.—հաւատալիք տարրերի, Ֆիզիքական երե-
ւոյթների և բնութեան թաղաւորութիւնների մասին:

դ. Կերպարանափոխութիւն, կախարդներ և կախարդութիւններ.—
սեռի փոփոխութիւն, պոչուր պառաւաններ, եղնգի աշկ, գարի ցկեկ, նեա-
ղնեկ, փիլթա-թափելի:

ե. Մնտրապաշտութիւններ:

զ. Բաղդի և ճակատագրի մասին, երազ, տեսիլք և թովչութիւն:

է. Պատերը, ուխտ և ուխտագնացութիւն:

ը. Տարաւ կարեւորագոյն տօներն և նոցա առթիւ կատարող ծէ-
սերն ու ժողովրդական սովորութիւնները: Նոր տարի, սուրբ Սարգիս,
Տեսաւ ընդառաջ (Տէրնդաղ) Մեծ պաս և միջինք, Մաղկազարդ (զառչար-
գար), Զարչարանքի շաբաթ, Զատիկ, Համբարձում, Մալխի 7:

Հաւ գրչագիրներ:

Գ. Կոթոր: Բարբառի ուսումնասիրութիւնը: Ալէքսանդր Տոմոնի
«Ахальцехский говоръ» գրքի թարգմանութիւնը, Ախալքալաքի բարբառի
տարբերութիւնների մասին ծանօթութիւններով: Բ ա ու և ո ճ 2000 հատ:
Ս. Կոթոր: «Աւախքի բուրմունք» խորագրով ժողովրդական բանա-
տեղծութիւններ. բացի տպածից նաև Մանկական երգեր 18 հատ.
Սրբոց երգեր՝ Վառլառաւ կուսի և Ս. Կարապետի վիճակի երգեր 100 հատ.
Աշուղական երգեր ? հատ: Ժողովրդական եղանակներ (ձանադրեւ է պ.
Բրդեան) 50 հատ: Գաւառի նշանաւոր աշուղների կենսագրութիւններ,
Սիալի և Զիւանի, Առակներ 26 հատ: Հեքիաթներ 30 հատ: Առածներ
300 հատ:

Բառարան հայերէնից-թուրքէն և թուրքէն մի քանի երգեր:

Բացի սորանից 27 լուսանկարչական պատկեր. գաւառի տեսարան-
ների, հնութիւնների, տիպերի և ալն, որոնց համար լատով լուսանկար է
գնացել Ալէքսանդրապոլից:

Արայիսի մի ընդարձակ ծրագրով աշխատութեան դժարութիւնները
հասկանալի են նոցա, որոնք ոչ թէ գրքերից, լրագրներից և կամ կողմ-

Նակի աղբիւրներից հիւսում են իրանց աշխատութիւնները, ալ մտնելով ժողովրդի բոլոր խաւերի մէջ, համբերութեամբ տանում են անպատմելի և միայն գրողին հասկանալի նեղութիւնները և տալիս են ոչ թէ բանաստեղծութիւն և կամ անձնական սպաւորութիւններ, ալ մի իրական, օրկելտիւ նկարագրութիւն. ալդ է եղել, գոնէ, իմ Զանքը և անա ինչու ալ ամբողջ աշխատութիւնը ներկայացնում է հոմ ճիւթ, ուր չկալ իմ անձնական կարծիքս և կամ հալեացքս: Ես կը վերադառնամ ալդ Նիւթերի քննութեան, երբ ալ ծրագրով հաւաքած նիւթերը միջոց կը տան համեմատական ուսումնասիրութեան և երբ ես ուսումնասիրելով եւրոպականը՝ պատրաստ կը զգամ ինձ ալդ դժւարին գործին:

Միայն ալժամ թող ներէ ինձ չարգելի ընթերցողը, որ համեմատութեան գէմ մեղանչում եմ պ. Վանցեանի դատապարտութեան գէմ դնելով: Սահակ Մեսրոպեան մրցանակաբաշխութեան լանձնաժողովի 1891 թ. որոշումը ալդ ամբողջ աշխատութեան մասին, որի միայն մի տասերորդ մասն է տպւել. «Ձեր «Ջաւախք» աշխատութիւնն ըստ ամենանի չարմար գործ էր կտակարարի նպատակին և արժանի մրցանակի, եթէ ներկալ ժամանակի տեղույս քաղաքականութեան ծանր հսկողութիւնն զմեզ զգուշ չը պահէր, քանզի 'ի նմա ոչ սակաւ տեղեկութիւնք կալին Կարնու անցեալ գէպքերի վերաջ մանրամասնութիւններով, որ անկարելի և անհնարին կընէին զայն ի լոյս ածողն վարձատրել... Պատճառներն քաղաքական և ոչ գրական» և պ. Խալաթեանի 1889 թ. չալտնած կարծիքը, թէ «եթէ խնամքով դասաւորէք ալդ Ձեր Նիւթերը, դա կարող է առաջնակարգ տեղ բռնել մեր ալդ ճիւղի գրականութեան մէջ»: Պարզ է, որ ալսպիսի մի աշխատութեան սպագրութիւնը հեռու է մի ամսագրի ծրագրից և ծաւալից, հեռու է Նաե մի ուսանողի, և նոն իսկ մեր Հրատ. Ընկեր. միջոցներից և ալ է պատճառը, որ ալդ աշխատութիւնը հրատարակւելու է մաս մաս, ուրեմն և պարոն Վանցեան թող բարի լինի սպասելու, որ իւր պահանջածներն էլ լոյս տեսնեն: Միայն մի բան, որ սաստիկ չուզել է և ինձ, ալդ սպագրական սխալներն են. Բալց պ. Վանցեան իզուր է մեղադրում ինձ, դա Հրատարակ. Ընկ. անուշադրութեան արդիւնքն է: Նորա հրատարակած նոն իսկ գրական լեզուով գրքերը լի են տառասխալներով: Իսկ ինչ վերաբերում է փշիկներով պակաս տառերը լրացնելուն, ալդ ես իմ չանցանքս չէ, որովհետեւ ապագայում միակերպութիւն պահպանելու նպատակով ես ընդունել եմ պ. Խալաթեանի առաջարկած նշաններով տառերը, բալց որովհետեւ ալդ նշաններով տառերը նոր պէտք էր ձուլել տալ, ուստի և Ընկերութիւնը առանց ինձ խմացնելու՝ նշանները զանց է առել: Եւ եթէ էա հնչիւնը պահպանւել է, դա սրբագրողի շնորհիւն է, որ երկկէտ վերագրով ա-ի առաջ տեղ տեղ աւելացրել է տառը:

Պ. Վանցեան առաջ բերելով սխալները՝ ասում է՝ գրած է՝ գլխի և

գլուխ, Մալում և Մարիամ և ալլն և ինչո՞ւ չի հասկանում, որ երկրորդ-
ները լառաջացել են սրբազրոյի անուշադրութիւնից և ոչ հաւաքողի
«չը գիտեանալուց»։ Նորան լալտնի էր, որ ես ժընէւեմ և ալդ հեռաւորու-
թիւնից ես չէի կարող սրբազրել։

Պ. Վանցեան մեղադրում է ինձ թէ չը գիտեմ (!) որ Ջաւախքում
կան ինքնուրոյն բարբառներով խօսող գաղթականներ, և վերջը ասում է
թէ «Անօրէն մարդկանցից ազատելու աղօթքը... Գռնէն անցալ թնդիրն էր
ծուխ...», պարեղերից շատերը և ալլն չեն պատկանում Ջաւախքին ալ
կամ գաղթած եկեղեցիներն են հետները բերել, և կամ պատահաբար գիտե-
ցել է մի Ջաւախցի Ալդալէս դատողին խորհուրդ եմ տալիս. նախ քան ուրի-
շին մեղադրելը, մի մտնի Դիլիֆ, Էշտիա, Թորիա, Ուճմանա և ալլն գիւ-
ղերից մինը, ալն ժամանակ կլմանալ որ ալդ գիւղերի բնակիչները կար-
նող գաղթի ժամանակ գաղթել են Մշից և Խնուսից և Ջաւախքի բնակիչ
են, իմ նպատակս չէ եղել միայն կարնի գաղթականների մասին նիւթեր
հաւաքել, ալ Ջաւախքի ամբողջ ազգաբնակչութեան և բացի զբանից ալդ գա-
ւառաբարբառի նմուշներն՝ անհրաժեշտ են մի գաւառաբարբառի մի ուրիշ
դաւառաբարբառի ազգեցութեան տակ կրած փոփոխութիւններն ուսում-
նասիրելու համար։ Միենայն ժամանակ կարիք չկալ ալդ երգերի տակ դնել
գիւղի անունը, քանի որ երգի մէջ արդէն ասում է. ինչպէս օր՝

Էլեր է Դիլիֆու հուսին,

Կը տանին մեր բզրի լուսին (եր. 27)։

Իսկ գրքի դեռ չը տպագրած մասում խօսւում է ալդ գիւղի բնա-
կիչների որտեղից գաղթելու և նոցա առանձնալատկութիւնների մասին։

Վերջապէս պ. Վանցեան ասում է «Մի քանի տեղեր աւելի անձե-
րելի սխալներ են արած, ալսպէս՝

Կովեր ունինք սե ու կարմիր,

Քեզ կ'թելու մէկ մասն ընտրիր,

Սեր ու կարագ շատ պատրաստիր։

Օ՛րդգծեալ երկու տողերը, ասում է նա, ժողովրդինը չեն, ալ թխովի,
կեղծ ու արհեստական։ Դոքա մեր գրական լեզուով են գրած»։

Կարծում էի, թէ աւելորդ է բացատրել, որ ոչ միայն ալդ տողերը,
ալ և ամբողջ երգը ժողովրդինը չէ, ալ ժողովրդական մի անհատի, Գան-
ձա գիւղացի Պօղոսինը, ինչպէս և երևում է երգի վերջին տնից։

Սա Պօղոսն եմ վալ գանձացի,

Տիրուն տարան, ես շատ լացի,

Սէրս գնաց ես որբ մնացի,

Էլեր ես սէլր անես, սէլր անես։

Եւ ալսպիսի երգերը անհրաժեշտ են ապացուցանելու թէ ինչպէս գիւղացի երիտասարդութիւնը քաղաքացիներին, գիւղական ուսուցիչներին և ուրիշներին հետ շփելով փոքր ի շատէ սովորում է գրական լեզուն, և ձըգտում է իւր երգերի մէջ գործածել այն, ինչպէս որ անում են և մեր աշուղները, որոնց պարզ երգերի մէջ շատ անգամ ցցում են խիստ գրաբառ բառեր:

Վերջացնելով խօսքս թողնում եմ չարգելի ընթերցողին եզրակացութիւն անելու:

ԵՐԻԱՆԴ ԼԱԼԱՅԵԱՆ:

Հոր ստացւած գրքեր

1) ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ.—«Հրաւիրակ երկրին անտեսաց», երկրորդ տպագրութիւն, Հրատարակութիւն եղբարց Կիւպէնկեան, 1892 թ., Երուսաղէմ, տպարան Առաքելական աթոռոյ սուրբ Յակոբեանց, գինն է ?:

2) РАФФИ.—«Золотой пѣтухъ». Переводъ съ армянскаго Н. М. Кара-Мурза. Тифлисъ, 1892 г. գինն է 1 ուսըլի:

3) ՍԻՆԻՑԻՆ, Ա. Պ., ատամնաբույժ.—«Հանրամատչելի խրատներ բերանի խոռոչի և ատամների խնամատարութեան մասին խորեպի ժամանակ», Թարգմանեց Թիֆլ. քաղաք. բուժարանի ատամնաբույժ Հ. Յ. Օրբելի, Թիֆլիս, տպ. Ռոտինեանցի, 1892 թ., գինն է՝ ամեն տեղ ձրի:

4) ՄՈՃՈՒԵԱՆՑ, Պետրոս.—«Բանաստեղծութիւններ», Ալեքսանդրապոլ, տպ. Արթ. Մալխասեանցի, 1892 թ., գինն է 25 կոպէկ:

5) ՇԵՔՍՊԻՐ, Վիլլիամ.—«Մակբեթ», ողբերգութիւնութիւն հինգ արարւածով, Թարգմանեց Ստ. Մալխասեանց, Հրատ. Թիֆ. Հրատարակչ. Ընկերութեան, Թիֆլիս, տպ. Արթր Նազարեանի, 1892 թ., գինն է 50 կոպէկ:

6) ԹՈՒՄԱՆԵԱՆՑ, Յարութիւն.—«Խոլեր, վոդըլի մէկ արարւածով (արտատպած «Տարադ»-ից), Թիֆլիս, տպ. Արթր Նազարեանի, 1892 թ., գինն է 10 կոպէկ:

7) «ԱՐԱՅՍ», գրական և գեղարվեստական պատկերազարդ հանդէս. Հրատարակիչ Ս. Գուլամիրեանց, 1892 թ., չորրորդ տարի, Գիրք Ա. Ս. Պետերբուրգ, տպ. Լիբերմանի, գինն է 2 ու 50 կոպէկ:

8) ԲՐՈՒՔԷՐ, Ռաուլ.—«Փորձանքների (?) բժշկական», սկզբնական օգնութիւն մինչև բժշկի գալը, Թարգմ. ֆրանսերէնից Բ. Օհանեան, Հրատ. Թիֆլ. Հրատարակչ. Ընկերութեան № 60, Թիֆլիս, տպար. Արթր Տ. Նազարեան, 1892 թ., գինն է 20 կոպէկ:

(Շարուն. տես ներկայ համարի վերջը):